ՀԱՐԳԵԼԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը իրականացնում է մասնագետների հավաքագրում փորձագետների բազայում ընդգրկելու նպատակով

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ) մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրման աշխատանքներում ընդգրկելու նպատակով համագործակցության է հրավիրում բոլոր այն մասնագետներին, ովքեր փորձառություն ունեն կրթական գործընթացների կազմակերպման, մասնագիտական կրթության համակարգում դասավանդման, առարկայական և կրթական ծրագրերի մշակման, մասնագիտական կրթական ծրագրերի և ուսումնական հաստատության գործունեության փորձագիտական գնահատման ոլորտներում: Արտաքին փորձագետների ընտրությունը կարևորագույն խնդիրներից է, քանի որ հավատարմագրման որոշումների ճանաչումը մեծապես կախված է փորձագետների ընտրության չափանիշներից, դրանց պահպանումից և սահմանված ընթացակարգերի իրականացումից:

Փորձագետի աշխատանքի համառոտ նկարագիրը

Յուրաքանչյուր ուսումնական հաստատության հավատարմագրման գործընթացի կազմակերպման համար ՈԱԱԿ-ի փորձագետների բազայից ընտրված մասնագետներից կազմվում է փորձագիտական խումբ: Խումբը իրականացնում է ուսումնական հաստատության կողմից ներկայացված ինքնավերլուծության ուսումնասիրություն, կատարում այց մասնագիտական ուսումնական հաստատություն, որոնց արդյունքների հիման վրա պատրաստում փորձագիտական զեկույց: Զեկույցի հիման վրա ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովը որոշում է կայացնում տվյալ հաստատությանը կամ դրա մասնագիտական կրթական ծրագրին հավատարմագրվածի կարգավիճակ շնորհելու վերաբերյալ:

Փորձագետների աշխատանքին և նրանց ներկայացվող պահանջներին մանրամասն կարող եք ծանոթանալ ՈԱԱԿ-ի կայքէջում տեղադրված «ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ»-ի 79-րդ էջում, «Փորձագետների ընտրության չափանիշներ, ուղենիշներ և ներկայացվող պահանջներ» բաժնում (http://www.anqa.am/am/Portals/0/ANQA_manual_ARM.pdf):

Մասնագետների հավաքագրման գործընթացը

Փորձագետների բազայում գրանցվելու գործընթացը իրականացվում է երկու փուլով.

1. Դիմողները իրենց ինքնակենսագրությունը (CV հայերեն տարբերակով) պետք է ուղարկեն ՈԱԱԿ-ի հատուկ էլեկտրոնային փոստի հասցեին՝ expert@anqa.am:

2. Մասնագետների էլեկտրոնային փոստի հասցեին կուղարկվեն ՈԱԱԿ-ի փորձագետների հատուկ կայք էջի հասցեն, ինչպես նաև անձնական մուտքանունը (login) և գաղտնաբառը (password): Մուտքանունի և գաղտնաբառի կիրարկման միջոցով փորձագետները մուտք կգործեն իրենց անձնական էջին, որտեղ պետք է լրացնեն իրենց տվյալները և հաստատեն դրանք: Լրացված տվյալները հաստատելու պահից մասնագետները կընդգրկվեն ՈԱԱԿ-ի փորձագետների բազայում:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Օրբելի եղբ. փ. 22,
Էլ. փոստ՝ info@anqa.am
Կայքէջ՝ www.anqa.am
Հեռ՝ (+374 10) 22 91 45, 22 91 46

ՈԱԱԿ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ